ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՎԱՆԴԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՏԱՐԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՈՒՄ (1941—1945 ԹԹ.)

Պատմ. գիտ. դոկտոր Կ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ ժողովուրդը, Խորհրդային Միության մյուս ժողովուրդների հետ միասին, ակտիվ մասնակցություն ունեցավ 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմին։ Նրա ավելի քան 500 հազար որդիներ և դուստրեր պատվով կատարեցին հայրենիքի հանձնած ունեցած իրենց սրբազան պարտքը՝ արժանի ավանդ ներդնելով ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում։ Ավելի քան 200 հազար հայ ռազմիկներ զոհվեցին ռազմաճակատում, շուրջ 70 հազարը պարգևատրվեցին մարտական շքանշաններով ու մեդալներով, 100 հայերի շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում. Խորհրդային Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը և լեգենդար օդաչու, գվարդիայի փոխգնդապետ Ն. Դ. Ստեփանյանը այդ բարձր կոչմանն արժանացան կրկնակի։ 27 հայ ռազմիկներ դարձան Փառքի շքանշանի բոլոր երեք աստիճանների լրիվ ասպետներ։ Խորհրդային Միության մարշալի զորավարական բարձր կոչում շնորհվեց Հ. Ք. Բաղրամյանին, Խորհրդային Միության նավատորմի ծովակալի կոչում՝ Հ. Ս. Իսակովին, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալի կոչում՝ Հ. Խ. Բաբաջանյանին, ավիացիայի մարշալի կոչում՝ Ս. Ա. Խուդյակովին (Ա. Ա. Խանփերյանցին), ինժեներական զորքերի մարշալի կոչում՝ Ս. Ք. Աղանովին։ Պատերազմի տարիներին Կարմիր բանակի շարքերում մարտնչել են 60 հայ գեներալներ։ Հետպատերազմյան տարիներին գեներալական կոչման են արժանացել ևս 64, իսկ ծովակալի կոչման՝ 9 հայ ճակատայիններ։ Պատերազմի ժամանակ հայ զորավարներից մեկը եղել է ռազմաճակատի, երեքը՝ բանակի, վեցը՝ կորպուսի, 22-ը՝ դիվիզիայի հրամանատարներ և այլն։ Պատերազմի տարիներին 13 հայերի շնորհվել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում։ Նրանցից երեքը այդ բարձր կոչմանն արժանացել են կրկնակի։

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի գործում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Խորհրդային Հայաստանի աշխատավորները։ Առաջնորդվելով «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» նշանաբանով, նրանք Հայաստանը վերածեցին Կարմիր բանակի զինանոցի, որտեղից ամեն օր երկաթուղային գնացքակազմերով ռազմաճակատ էր ուղարկվում զենք, զինամթերք, համազգեստ, սննդամթերք, մարդկային համալրումներ և այլն։ Շնորհիվ Հայաստանի բանվորների, գյուղացիների և մտավորականության հերոսական աշխատանքի, պատերազմի տարիներին ռազմաճակատում մարտնչող հայ ռազմիկները մշտապես զգացել են թիկունքի աշխատողների աջակցությունը, ստացել նրանց ինչպես նյութական, այնպես էլ բարոյական օգնությունը։

Դեռևս պատերազմի առաջին շրջանում հայ ժողովուրդը հայրենասիրական նամակ-կոչով դիմեց ռազմաճակատում մարտնչող իր զավակներին։ Նամակը ստորագրել էին 335316 մարդ, որոնց թվում նշանավոր գիտնականներ, գրողներ, նկարիչներ, բանվորներ, գյուղացիներ, դերասաններ, բժիշկներ և այլք։ Այն տպագրվեց առանձին գրքույկով և ռազմաճակատ ուղարկվեց 1942 թ. աշնանը։ 1943 թ. փետրվարի 27-ին նամակը հրապարակվեց

«Правда», «Известия», «Красная звезда», «Комсомольская правда» և բազմաթիվ այլ հանրապետական ու ռազմաճակատային թերթերում[1]։ Նամակը վառ կերպով արտահայտում էր հայ ժողովրդի հայրենասիրությունը, նրա նվիրվածությունը հայրենիքին։ Այն հիշեցնում էր հայ ռազմիկներին հայ ժողովրդի դառն անցյալը, թուրքական բարբարոսների կողմից Արևմտյան Հայաստանի բնիկ, խաղաղ հայ բնակչության 1915 թ. կոտորածների սև օրերը, ջարդեր, որ իրականացվեցին Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիայի հովանավորությամբ։ Նամակը կոչ էր անում ամբողջ հոգով ատել թշնամուն, ոչնչացնել ֆաշիստական զավթիչներին և միայն հաղթանակից հետո վերադառնալ տուն։ «Հիշեցեք մեր ժողովրդի իմաստուն խոսքերը՝ «Չգիտակցված մահը՝ մահ է, գիտակցված մահը՝ անմահություն է»,— նշված էր նամակում։ Ժողովուրդն իր զավակներին պատմում էր այն հերոսական աշխատանքի մասին, որ կատարում էին Հայաստանի աշխատավորները՝ թշնամուն չախչախելու համար. «Գիշեր ու ցերեկ մեր գործարանները աշխատում են,—նշված էր նամակում,—Հայաստանի բանվորներն ու բանվորուհիները հաղթահարում են ամեն մի դժվարություն, որ երկիրը լինի հարուստ և ուժեղ։ Դուք զենքի և ռազմամթերքի պակաս չեք զգա։ Մենք յուրացնում ենք արտադրանքի տասնյակ նոր տեսակներ, որպեսզի դիպուկ լինի ձեր կրակը և ձեր հարվածը՝ ոչնչացնող։ Մեր կոլտնտեսային դաշտերում գիշեր ու ցերեկ եռում է աշխատանքը... Պատերազմի ընթացքում մեր դաշտերից հավաքում ենք շատ ավելի բերք, քան պատերազմից առաջ... Պատերազմի առաջին իսկ օրերից իր ամբողջ ուժերը ծառայության է դրել հայրենիքի պաշտպանության գործին նաև հայ մտավորականությունը, որ անխոնջ աշխատանքով, գիտության, գրականության և արվեստի զենքով օգնում է մեր արդար գործի հաղթանակին...»[2]։

Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին բազմամիլիոն տպաքանակով, ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով, տարածվեց բոլոր ռազմաճակատներում, նամակի բովանդակությունը հասցվեց բոլոր զինվորներին ու հրամանատարներին։ Հայ ռազմիկները, պատասխանելով հայ ժողովրդի կոչին, երդվում էին սրբությամբ կատարել մայր-հայրենիքի պատվիրանները և ռազմաճակատից վերադառնալ միայն հաղթանակով[3]։

Չնայած ծանր պայմաններին, Հայաստանի արդյունաբերությունը Հայրենական մեծ պատերազմի ժամանակաընթացքում ոչ միայն կանգ չառավ և ոչ մի բոպե, այլև շարունակեց զարգանալ արագ թափով։ Ռազմական նպատակների համար արտադրանք տալու հետ մեկտեղ, հանրապետության արդյունաբերությունը շարունակում էր կառուցել նոր ձեռնարկություններ և ընդլայնել նրանց կարողություններ։ Հատկապես ուժեղ կերպով զարգացավ մետաղամշակման արդյունաբերությունը, որը հանրապետությունը համարյա չուներ։ Շահագործման հանձնվեցին 30 նոր ձեռնարկություններ, որոնց թվում՝ ավիացիոն, կոմպրեսորային, ժամացույցի, շարժիչավերանորոգման, ավտոբուսների, ծծմբաթթվի, ռեմենտի (Անի), սոսնձի գործարաններ և այլն, կորզի (մանրաշերտավոր բրդե գործվածք), խարբերդի մանվածքային, սայլաշինական, թամբագործական ֆաբրիկաներ և այլն։ Բացի դրանից շահագործման հանձնվեցին 110 նոր արտադրամասեր, որոնց թվում՝ ապակու, ավտոկորզի, ձեռքի օճառի, լվացքի փոշու, կրկնակոշիկների արտադրամասերը և այլն։

Պատերազմի տարիներին յուրացվեց 300 նոր տեսակի ապրանքների՝ որոնց թվում՝ 10 տեսակի գինամթերքի. 2 տեսակ ոչնչի, 6 տեսակ կապի միջոցների, 47 տեսակ սայլա-գումակային տնտեսական և ուսապարկերի, 20

---

1 Հայ ժողովրդի պատմություն. հ. VIII, Երևան, 1970, էջ 73—74։

2 Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին. Երևան, 1943, էջ 20—27։

3 Հայ մարտիկների պատասխանը հայ ժողովրդին. Երևան, 1944, էջ 3։

տեսակ քիմիական նյութերի, 3 տեսակ ինժեներական գույքի, 6 տեսակ հրետանային գույքի, հրակայուն աղյուսի, ցեմենտի փոխակերպիչի, էլեկտրահալման եղանակով ստացվող ապակյա իրերի, ռետինատեխնիկական իրերի արտադրությունը և այլն[4]։ Արտադրվեց 233 հազար հատ 82 միլիմետրանոց բեկորային ական, 203 հազար հատ ավիացիոն ռումբի պատյան, 167 հազար հատ ձեռքի նռնակի պատյան, 150 հազար հակատանկային ականի պատյան, 90 հազար հատ դյուրավառ հեղուկով լցված շիշ և այլն[5]։

ԽՍՀՄ ավիացիոն արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատի Երևանի № 447 գործարանը սկզբում կատարում էր վնասված ինքնաթիռների նորոգման աշխատանքներ, ապա ձեռնամուխ եղավ «ՅԱԿ-3» կործանիչ ինքնաթիռի պահեստամասերի՝ թևերի, զետնի վրա շարժվելու հարմարանքի (շասսի) արտադրությանը, որոնք ուղարկվում էին Թբիլիսի՝ վերջնական հավաքման։ Պատերազմի վերջին տարում Երևանի № 447 գործարանը ձեռնամուխ եղավ «ՈւՏ-2Մ» թեթև ինքնաթիռի սերիական արտադրությանը[6]։ Երևանի Ջերժինսկու անվան հաստոցաշինական գործարանում յուրացվեց 50 միլիմետրանոց վաշտային ականանետի սերիական արտադրությունը[7]։

Գերմանա-ֆաշիստական զավթիչների կողմից Ուկրաինայի օկուպացման, հետևապես նրա սոդայի գործարանների շարքից դուրս գալու հետևանքով, Ադրբեջանի նավթարդյունաբերությանը կաուստիկ սոդայով ապահովելու ողջ ծանրությունն ընկավ Հայաստանի քիմիական գործարանների ուսերին։ Առանց կաուստիկ սոդայի հնարավոր չէր բենզինի, ռազմաճակատի համար խիստ կարևոր այդ վառելանյութի ստացումը, որը չափազանց անհրաժեշտ էր ավիացիայի ու տանկերի համար։ Նավթարդյունաբերության համար խիստ անհրաժեշտ էին հաղորդափոկեր, առանց որի հնարավոր չէր գործի գցել նավթահան պոմպերը։ Երևանի «Սովպրեն» քիմկոմբինատը և «Արդտեխռետին» գործարանը լիովին բավարարեցին Ադրբեջանի նավթարդյունահանող արդյունաբերության պարիքները։ Միայն Ալավերդու ծծմբաթթվային գործարանը պատերազմի տարիներին Ադրբեջանի նավթարդյունաբերությանը օրական տալիս էր 70 տոննա անհրաժեշտ ծծմբական թթու և այլն[8]։

Աշխատանքային համագործակցության բազմաթիվ օրինակներ կարելի է բերել Հայաստանի և Վրաստանի միջև։ Թբիլիսիի այն գործարանի համար, որտեղ հավաքվում էր Շպագինի ինքնաձիգը (ավտոմատ), շտապ հարկավոր էր քրոմի անհիդրիդ՝ ինքնաձիգի փողը քրոմապատելու համար։ Հայաստանի տեղական արդյունաբերության ժողկոմատը կարճ ժամանակաընթացքում ապահովեց անհրաժեշտ քանակությամբ քրոմի անհիդրիդի ուղարկումը Թբիլիսի։ Պատերազմի տարիներին Հայաստանի արդյունաբերությունը Ինդուրիի թղթի-ցելյուլոզայի կոմբինատին մատակարարում էր քլորակիր, որն առաջ ստացվում էր Ուկրաինայից։ Միության մեջ կոֆեին արտադրող միակ գործարանը, որը գտնվում էր Բաթումիում, անգործության էր մատնվել քլորոֆորմի բացակայության հետևանքով, որը բերվում էր Մոսկվայից։ Կոֆեինը հանդիսանում էր այն կարևորագույն դեղորայքներից մեկը, որն օգտագործվում էր Կարմիր բանակի դաշտային ու թիկունքային սանիտարական կազմակերպությունների և Առաջնագծի հոսպիտալների կողմից։ Քլորոֆորմ կարելի էր ստանալ նաև Երևանի «Սովպրեն» քիմկոմբինատում, ինչը և կարճ ժամանակամիջոցում իրագործվեց։ Բաթումիի գործարանը սկսեց կարևոր արտադրանքի թողարկումը։

---

4 ՀՀ նորագույն պատմության պետական կենտրոնական արխիվ (ՀՀ ՆՊՊԿԱ), ֆ. 113, ց. 33 գ. 75, թթ. 33—34։

5 Նույն տեղում, թ. 3։

6 Նույն տեղում. 313, ց. 1, գ. 9, թթ. 103—104։

7 Նույն տեղում, ֆ. 113, ց. 33, գ. թ. 8։

8 В. А. Мурадян. Компартия Армении в годы Великой Отечественной войны, Ереван, 1984, с. 166.

Պաշտպանական կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի գունավոր մետաղագործության արդյունավետ զարգացումը։ Շնորհիվ նախապատերազմյան տարիներին իրագործված երկրաբանահետախուզական աշխատանքների, հանրապետության պղնձարդյունաբերության համար հայտնաբերվել էր հարուստ հումքային բազա, որը հնարավորություն տվեց արդեն պատերազմի տարիներին կտրուկ կերպով ավելացնել պղնձի և մյուս գունավոր մետաղների արտադրությունը, որոնց անհրաժեշտությունը խիստ մեծացել էր. Հայաստանը տարեկան արդյունահանում էր 450 հազար տոննա պղնձի հանքանյութ, արտադրում 8 հազար տոննա պղինձ[9]։

Արդյունաբերության մեջ աշխատող բանվորների (արդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը կազմում էր 30—35 հազար մարդ, Հայարդխորհի արտելներում աշխատողների թիվը՝ 8000, իսկ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ, առանց գյուղատնտեսության, աշխատում էին ավելի քան 65 հազար կանայք) հերոսական ջանքերի շնորհիվ պատերազմի ժամանակ Հայաստանը տարեկան արտադրում էր շուրջ 100 հազար տոննա ցեմենտ, 90 հազար տոննա կարբիդ, 5 հազար տոննա կաուչուկ, 15 հազար լրակազմ ավտոդող և ավտոկամերա, 800 հազար զույգ կոշիկ, 25 միլիոն մետր գործվածք, 20 միլիոն տուփ պահածո, 40 հազար դեկալիտր կոնյակ, 600 հազար դեկալիտր գինի, 3000 տոննա ծխախոտ, 7500 տոննա միս և երշիկեղեն, շուրջ 6000 տոննա քարածուխ և այլն[10]։

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև Հայաստանի գյուղատնտեսության աշխատավորները։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գյուղի աշխատավորության հիմնական մասը գտնվում էր գործող բանակի շարքերում և գյուղատնտեսական աշխատանքների ծանրությունը իրենց վրա էին վերցրել կանայք, մեծահասակներն ու երեխաները, ապա պարզ կդառնա այն հիրավի հերոսական աշխատանքը, որ իրագործեցին նրանք պատերազմի տարիներին։ 1942 թ. տվյալներով Հայաստանի կոլտնտեսություններում աշխատում էր 173267 կոլտնտեսական, որոնց կեսից ավելին կազմում էին կանայք։ Փոխարինելով ռազմաճակատ մեկնած տղամարդկանց, նրանք տիրապետեցին գուտ տղամարդկային մասնագիտություններին, ինչպիսիք էին տրակտորիստի, կոմբայնավարի, ավտովարորդի և այլ մասնագիտություններ ե դարձան իրենց գործի հմուտ վարպետներ։ Քաղաքային բնակչությունից (ուսանողներ, աշակերտներ և այլն) գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցեցին ավելի քան 20000 մարդ։

Պատերազմի ծանր տարիներին կոլտնտեսային կարգը դրսևորեց իր առավելությունը անհատական մենատնտեսության նկատմամբ։ Դաժան պայմաններում Հայաստանի 1035 կոլտնտեսություններ ու 15 խորհրդային տնտեսություններ արեցին ամեն ինչ, որպեսզի ռազմաճակատը, երկիրը ապահովեն անհրաժեշտ մթերքներով և հումքով։ Հայաստանի կոլտնտեսականներն իրենց խնայողություններից 46 միլիոն ռուբլի հատկացրին «Հայաստանի կոլտնտեսական» տանկային շարասյան կառուցման համար, իսկ «Խորհրդային Հայաստան» մարտական ավիաէսկադրիլիայի ստեղծման համար՝ 21 միլիոն ռուբլի։ Բոլոր տեսակի պետական պարտավորությունները կատարելուց հետո նրանք միայն 1943 թ. երկրե պաշտպանության ֆոնդին հատկացրին 130 հազար փութ հասահատիկ, մեծ քանակությամբ միս և գյուղատնտեսական այլ մթերքներ։ Իսկ ընդհանուր առմամբ, Հայաստանի աշխատավորները պատերազմի տարիներին պաշտպանության ֆոնդի համար հավաքեցին 45 206 000 ռուբլի, Կարմիր բանակի ֆոնդի համար՝ 85 841 000 ռուբլի, ռազմաճակատ ուղարկեցին 1 136 000 հատ տաք հագուստ, 206323

---

9 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 33, գ. 75, թթ. 32—33։

10 Նույն տեղում։

հատ անհատական ծանրոցներ, 45 վագոն զանազան մթերքներ և այլն[11]։ Հայաստանի կոլտնտեսականները 1944 թ. պլանից դուրս Կարմիր բանակի ֆոնդ մուծեցին 200 հազար փութ հացահատիկ։ Հսկայական միջոցներ առանձնացվեցին Լենինգրադի, Ստալինգրադի, Օդեսայի և այլ ազատագրված շրջանների վերականգնման ֆոնդի համար։

Պատերազմի տարիներին հանրապետության ցանքատարածությունները ոչ միայն չնվազեցին, այլև ավելացան 27 հազար հեկտարով։ 1940 թ. այն կազմում էր 433,7 հազար հեկտար, իսկ 1945 թ. հասավ 460,7 հազար հեկտարի։ Հանրապետության կոլտնտեսությունները հատկապես մեծ աշխատանք կատարեցին տեխնիկական կուլտուրաների՝ ծխախոտի և շաքարի ճակնդեղի ցանքատարածությունները ավելացնելու համար։ Այսպես, եթե 1940 թ. ծխախոտի աճեցմանը հատկացված էր 5 հազար հեկտար, ապա 1945 թ. այն հասավ 8 հազար հեկտարի։ Բավականաչափ ավելացան նաև շաքարի ճակնդեղին հատկացված ցանքատարածությունները։ 1940 թ. համեմատ այն ավելացավ 1000 հեկտարով։ Պատերազմի տարիներին հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը մեկ հեկտարից միջին հաշվով ավելացավ 1,7 ցենտներով, կարտոֆիլինը՝ 25 ցենտներով։ 1940 թ. համեմատությամբ խաղողի այգիների տարածքը ավելացավ 3 հազար հեկտարով, պտղատու այգիներինը՝ 5 հազար հեկտարով։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հանրապետությունում շարունակում էր զարգանալ համայնական անասնապահությունը։ 1941 թ. հունվարի 1-ից մինչև 1945 թ. հունվարի 1-ը խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը ավելացավ 11200 գլխով, այսինքն, կազմեց 340 հազար գլուխ, ոչխարների ու այծերի գլխաքանակն ավելացավ 196135 գլխով, դառնալով ավելի քան 360 հազար գլուխ։ Անասունների գլխաքանակի ավելանալու հետ մեկտեղ բարձրացավ և նրա մթերատվությունը, բարելավվեց անասնահոտի ազնվացեղությունը։ Պատերազմի 4 տարիների ընթացքում յուրաքանչյուր կաթնատու կովի մթերատվությունը ավելացավ 7 լիտրով, իսկ ոչխարինը՝ 3 լիտրով։ Ավելացավ նաև խոզերի գլխաքանակը մինչև 45 հազար։ Այդ ամենը հնարավորություն տվեց գյուղի աշխատավորներին մշտապես կատարելու Կարմիր բանակի մսի ֆոնդի պլանը, որը կազմում էր տարեկան 20 հազար ցենտներ[12]։

Հայաստանը համարվում էր այն հանրապետություններից, որոնք հացը հիմնականում ստանում էին երկրի այլ շրջաններից։ Պատերազմի տարիներին հացի ներմուծումը հասավ նվազագույնի, իսկ հացի պահանջը բավարարվում էր սեփական արտադրության հաշվին։

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում իր արժանի ավանդը ներդրեց նաև խորհրդային Հայաստանի մտավորականությունը։ Հայաստանն աղքատ էր վառելիքով, երկրաբանները հայտնաբերեցին տորֆի տասնյակ հանքավայրեր, նշեցին Ջաջուռի քարածխի հարստացման եղանակը, քիմիկոսների հետ միասին կազմակերպեցին տորֆի կոքսացումը։ Հիշեցնենք, որ պատերազմի տարիներին Հայաստանում արդյունահանվում էր տարեկան 6000 տոննա քարածուխ։ Հայաստանի քիմիկոսները հանրապետությունում հայտնաբերեցին հումք՝ ռազմական արդյունաբերության համար խիստ անհրաժեշտ քլորական ալյումին արտադրելու համար, սկսեցին պաշտպանական դույնի հույժ կարևոր ներկի արտադրություն կտորեղենի համար և այլն։ Պատերազմի առաջին տարիներին ականավոր աստրոֆիզիկոս Վ. Հ. Համբարձումյանը առաջ քաշեց պղտոր միջավայրում լույսի սփռման նոր տեսությունը, որը կիրառական նշանակություն ուներ ռազմական գործում։ Այդ հայտնագործու-

---

11 ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայրենական մեծ պատերազմի պատմության կաբինետի արխիվ, ֆ. 240, գ. 1, թթ. 22—23։

12 Советская Армения в годы Великой Отечественной войны (1941 – 1945 гг.). Сборник документов и материалов. Ереван. 1975, с. 313—320.

թյան համար գիտնականն արժանացավ ԽՍՀՄ առաջին կարգի պետական մրցանակի։ Ֆիզիոլոգ Էդրաս Հասրաթյանը ստեղծեց հատուկ հակացնցակաթվածային լուծույթ, որը հաջողությամբ կիրառվեց ռազմաճակատային պայմաններում։ Նշանակալից հաջողություններ ձեռք բերվեցին տիեզերական ճառագայթների ուսումնասիրման բնագավառում։ Հետազոտության ղեկավարներ Ա. Ի. Ալիխանովին և Ա. Ի. Ալիխանյանին շնորհվեց առաջին կարգի պետական մրցանակ։ Հանրապետության գիտնականների մի ստվար ջոկատ աշխատում էր դաշտերի ու այգիների բերքատվության բարձրացման ուղղությամբ։ Հումանիտար գիտությունների ներկայացուցիչները՝ Հայաստանի պատմաբանները, տնտեսագետները, փիլիսոփաները, գրականագետները, լեզվաբանները ամենօրյա գործնական մասնակցություն ունեցան ռազմադաստիարակչական աշխատանքներին, հանդես եկան զեկուցումներով ու դասախոսություններով, գրեցին գրքույկներ ու հոդվածներ, որոնք տոգորված էին հայրենասիրական ոգով ու թշնամու նկատմամբ անողոք ատելությամբ։ Հանրապետության գիտահետազոտական հիմնարկների ղեկավարությունը մի միասնական ղեկավար կենտրոնում միավորելու և գիտական աշխատանքի ավելի նպատակասլաց զարգացումն ապահովելու համար ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հիման վրա 1943 թ. նոյեմբերի 10-ին Երևանում կազմակերպվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան[13]։ Նրա պրեզիդենտ ընտրվեց խորհրդային ականավոր գիտնական, պատմաբան-արևելագետ Հովսեփ Օրբելին։

Հայաստանի ԳԱ-ի ստեղծումը կարևոր դեր խաղաց Հայկական ԽՍՀ-ում գիտության զարգացման համար։ Պատերազմի առաջին տարիներին Հայաստանի գիտնականների սկսած գիտահետազոտական աշխատանքներն ընդունեցին ավելի խոր, ավելի արդյունավետ բնույթ։ Նրանց հայտնագործությունները նպաստեցին երկրի պաշտպանական հզորության հետագա ամրապնդմանը, ռազմաճակատի կարիքների ավելի լավ ապահովմանը։ Հայաստանի գիտությունների ակադեմիան ակադեմիկոս Հովսեփ Օրբելու խմբագրությամբ հրատարակեց մատենաշար՝ նվիրված հայ ժողովրդի հերոսական անցյալին, նրա ազգային հերոսներին, ռուսական և խորհրդային բանակի հայ զորավարներին ու գեներալներին։ Այդ գրքույկները լայն տարածում գտան հայ ռազմիկների շրջանում և կարևոր դեր խաղացին նրանց հայրենասիրական դաստիարակության գործում։

Խոսելով Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում Հայաստանի աշխատավորության ներդրած ավանդի մասին, չի կարելի չհիշել, թե ինչ աշխատանքներ տարվեցին հանրապետությունում գինվորական մասնագետ կադրեր պատրաստելու ուղղությամբ։ Դեռևս 1939 թ. սեպտեմբերին Երևանում բացվեց № 17 հրետանային դպրոցը, որտեղ 1941 թ. սովորում էին 630 կուրսանտներ[14]։ Դպրոցն իր առաջին շրջանավարտները տվեց Կովկասի ճակատամարտի ծանր օրերին։ 1940 թ. Երևանում բացվեց ռազմաօդային ուժերի միջնակարգ դպրոց, որտեղ սովորում էին 600 կուրսանտներ[15]։ Դպրոցը նույնպես իր առաջին շրջանավարտները տվեց Կովկասի ճակատամարտի օրերին։ Օդաչուական կադրեր էին պատրաստվում նաև Երևանի ու Լենինականի աերոակումբներում[16]։

Հաղթանակի գործում արժանի ավանդ ներդրեցին նաև Հայաստանի առողջապահության բնագավառի աշխատողները։ Պատերազմի տարիներին

---

13 ՀՀ Հասարակական քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի պետական կենտրոնական արխիվ (ՀՀ ՀՔԿՓ ՊԿԱ), ֆ. 1, ց. 32, գ. 27, թ. 69։

14 ՀՀ ՆՊՊԿԱ, ֆ. 113, ց. 8, գ. 11, թթ. 33—35։

15 Նույն տեղում, թ. 39։

16 Նույն տեղում, ց. 26, գ. 138, թթ. 1—15։

հանր.սպեստությունում գործող 94 հիվանդանոցներում և 25 հոսպիտալներում բուժվեցին ավելի քան 120 հազար վիրավոր զինվորներ ու սպաներ։

Կարելի է դեռ շատ օրինակներ բերել ցույց տալու համար, որ Հայաստանի աշխատավորները, չնայած ապրուստի ծանր պայմաններին, սովին, ցրտին ու ռազմաճակատից ստացվող ամենօրյա «սև թղթերին», գիշեր-ցերեկ աշխատում էին գործարաններում, հանքերում, կոլտնտեսային դաշտերում և իրենց հերոսական գործով ամեն ինչ անում ռազմաճակատի հաղթանակի համար։ Հայրենիքը բարձր գնահատեց Խորհրդային Հայաստանի աշխատավորների ծառայությունը, նրանցից 400 հազար հոգու պարգևատրելով «1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում կատարած անձնվեր աշխատանքի համար», իսկ ավելի քան 17 հազարին՝ «Կովկասի պաշտպանության համար» մեդալներով։ Հազարավոր բանվորներ, կոլտնտեսականներ, գրողներ, կոմպոզիտորներ, թիկունքի այլ աշխատավորներ պարգևատրվեցին տարբեր մեդալներով ու շքանշաններով, իսկ առավել աչքի ընկածները արժանացան պետական մրցանակների, պատվավոր կոչումների և այլն։ Նրանք պատերազմի տարիներին, հաղթահարելով ամեն տեսակ դժվարություններ, կրելով բազմաթիվ զրկանքներ, աշխատեցին իրենց և ռազմաճակատում մարտընչող հարազատների փոխարեն ու իրենց հերոսական աշխատանքով արժանի ավանդ ներդրեցին Հայրենական մեծ պատերազմում ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում։

ВКЛАД ТРУДЯЩИХСЯ АРМЕНИИ В ПОБЕДУ В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ (1941—1945 гг.)

Доктор ист. наук К. А. АРУТЮНЯН

Резюме

Армянский народ принял активное участие в Великой Отечественной войне Советского Союза в 1941—1945 гг. Более 500 тысяч его сыновей и дочерей вместе с русскими, украинцами, белорусами, узбеками, казахами и другими народами СССР с честью выполнили на фронте свой священный долг перед Родиной и внесли достойный вклад в победу над фашизмом. Свыше 200 тысяч воинов-армян погибло на фронте, 70 тысяч были награждены боевыми орденами и медалями. 100 армян получили звание Героя Советского Союза, а маршал Советского Союза И. Х. Баграмян и прославленный летчик, гвардии подполковник Н. Г. Степанян, были удостоены этого высокого звания дважды, 27 воинов-армян стали полными кавалерами ордена Славы всех трех степеней. Достойную лепту в дело победы над фашизмом внесли и труженики тыла Советской Армении. Руководствуясь девизом «Все для фронта, все для победы» — они превратили Армению в военный лагерь, арсенал Красной Армии, откуда каждый день железнодорожными эшелонами на фронт отправлялись оружие, боеприпасы, обмундирование и т. д. Промышленность республики за время войны освоила производство 300 видов новых изделий: боеприпасов, оружия, средств связи, обозо-хозяйственное имущество и др. Героическими усилиями тружеников сельского хозяйства продукция сельскохозяйственного производства, площадь посевных и поголовье скота не только не сократились, но и повысились. Свой вклад внесла и интеллигенция Советской Армении. Созданная в ноябре 1943 г. Академия наук Армении способствовала дальнейшему усилению оборонной

мощи страны, лучшему обеспечению нужд фронта, сыграла важную роль в деле военно-патриотического воспитания воинов-армян. За счет сбережений трудящихся республики были построены танковые колонны: «Колхозник Армении», «Зангезурский горняк», «Комсомолец Армении», «Давид Сасунский», авиаэскадрильи: «Советская Армения», «Физкультурник Армении», отправлено на фронт: теплая одежда в количестве 1 136 000 шт., индивидуальные посылки — 206 323 шт., продукты — 45 вагонов, внесены в фонд обороны — 45 206 000 руб., в фонд Красной Армии — 85 841 000 руб. и многое другое. Родина высоко оценила заслуги тружеников Армении, наградив более 400 тысяч человек медалью «За доблестный труд в Великой Отечественной войне 1941—1945 гг.» и более 17 тысяч — медалью «За оборону Кавказа». 13 армян были удостоены звания Героя Социалистического Труда, трое из них были удостоены этого высокого звания дважды.